Բ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28 ԱՊՐԻԼ 1899 — ԹԻՒ 123

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Տուկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 տ.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
—)(—
Ստանուցման տողը 20 սանթիմ է. երեքին առի՝ անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։
)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

R. P. Kalemkarian
(Autriche)
Mechitharistengasse N. 4
Vienne

Նամակի եւ դրամ դրկել
խմբագրութեան հասցէին
—
Адресъ на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
—
Ծրագիրն ետ չեն տրուիր
)(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՌՈՒՍ ՄԱՔՈՒՐ ԵՒ ԱՆԿԵՂԾ ՄԱՄՈՒԼԸ

—

Վերջին տարիներում՝ մինչ Տաճկահայաստանում թագաւորում է սուրը, հուրը, սովը և վաղում են արեան հեղեղներ, Ռուս կառավարութիւնը յարմար դատեց Կովկասում խեղդել այն ամենը ինչ որ զուտ Հայկական ոգի է կրում. իսկ վատ և չովինիստ մամուլը աջ ու ձախ հարուածել ամբողջ հայութիւնը, ջանալով հայ ժողովրդին ներկայացնել իբր մի վնասակար և ամեն պատուհասի ու չարչարանքի արժանի ժողովուրդ։

Ռուս կառավարութիւնը խեղդում է Կովկասի հայերին, զօրավիգ լինում Սուլթանին հայերին խպառ ջնջելու գործում. իսկ աղտոտ ռուս մամուլը, փրփուրը բերանին, կատաղի հարուածներ է հասցնում։ Եւ ահա, այդ դժոխային աղաղակների միջից դուրս է պրծնում արդար բարկութեան ճիչը։

Այդ ճիչը Ռուս անկեղծ, աղատամիտ և մաքուր մտքի ձայնն է, որ արձագանք է և Ռուս ժողովրդի լաւ մասի դէպի դժբախտ հայ ժողովուրդը ունեցած տրամադրութեան։

Իբր նմուշ ռուսական այդ հայասէր, աւելի ճիշդը ճշմարտասէր, ձայնի մենք բերում ենք «Ռուսկայա Միսլ» ամսագրի մէջ տպված մի յօդուածը, որը պատասխան է Տփխիսի «Կովկաս» անունով Ռուս լրագրում տպված հայատեաց յօդուածին։

«Կովկաս լրագրի արատաւորող խօսքերը», ահա «Ռուսկայա Միսլ»ի յօդուածի վերնագիրը որ սկսվում է այսպէս.

«Օտարները երբեմն մեղ դուվում էին որ մենք քաղցր ենք վարվում մեր նեաճած ազգերի հետ, խնայում ենք նրանց դատանքը և առանձնայատկութիւնները. յաճախ մենք էլ էինք կրկնում նոյնը։ Միայն արտասահմանում մեղ չը համակրող մարդիկ այդ երեւոյթը վերագրում էին մեր տգիտութեան. իսկ մենք հանդիստ խղճով վերագրում էինք ուրիշ պատճառների։

«Ռուս ժողովրդի յատկանիշն է բարեսրտութիւնը և համբերատարութիւնը դէպի օտար դատանութիւնները։ Մինչեւ հիմա էլ, այն նահանգներում՝ ուր ռուս գիւղացիների հետ ապրում են թաթարները, ռուսները ոչ միայն չեն խանդարում մահմեդականների կրօնական ծոնախմբութիւններին, այլ ընդհակառակը յարգանքով են վերաբերվում։

«Անդլիացիների Հնդկաստանում Լատարած գաղանութիւնները բարձրագոյն զարգացման նշան չեն, այլ արատ Անգլիայի համար, որի միակ արդարացումը կարող է համարվել սակաւաթիւ անգլիացիներին սպառնացող վտանգը։ Ի հարկէ մեր աչքում այդ արդարացումն էլ արժէք չունի։

«Բայց ահա այն երկրում, ուր մենք վաղուց հաստատվել ենք, ուր դարերէ ի վեր դատանվում է քրիստոնէութիւնը, ատելութեան խօսքերով ասպարէզ է գալիս, երբեմն ոչ այնքան անծանօթ բանաստեղծ, ռուս հրապարակախօս Վելիչկո՝ «Կովկաս» թերթի մէջ։

«Պարոնի «Սրտաբաց խօսքեր» վերնագրով յօդուածում, իբր նոր տարեան վերջանքն մտածումներ, մենք կարդացինք այնպիսի տողեր, որոնց կարող ենք միմիայն, «Ռուս անունը արատաւորող» կոչումը տալ։ Տեսէք ինչ է գրում Պ. Վելիչկոն. խաղաղ թուրքերը վաշխառու հայերից վրդովված՝ համբերութիւնից դուրս եկան և կոտորեցին «մի քանի հարիւր» անմեղ հայեր...

«Տասնեակ հազարներով մորթված ու տանջված հայերի, լկված կանանց, կոտորված ծերերի և մանուկների արիւնը բողոքում է երկնքի դէմ, բողոքում է եւրոպայի դէմ։ Իսկ Կովկաս լրագիրը «թեթեւ սրտով» խօսում է մի քանի հարիւր մեղաւոր հայերի մորթվելու մասին. այն խաղաղ քուրդերի մասին, որոնց գաղանութիւնները նոյնիսկ դիպլոմատիկա՛ն եւրոպային սարսափեցրին. այն խաղաղ թուրքերի մասին, որոնք հայերին կոտորեցին Պոլսում, տների և փողոցների մէջ...

«Այո՛, այսպէս գրելու համար, պէտք է լինել... Պ. Վելիչկո»։

Այսպէս բոլորովին յուզված ու վրդովված վերջացնում է յօդուածագիրը։ Խեղճը չի իմանում որ հայերի մէջ Վելիչկոից աւելի վատերը կան, որոնք ոչ միայն թուրքերին խաղաղ և անմեղ են համարում, այլ նրանց զինուորներին օգնելու համար դրամ են նեիրում և թքում ու մրսում այն ամենը, ինչ որ միակ պատճառն է աղատ և մաքուր մարդկանց սիրտը գրաւելու դէպի հայ ժողովուրդը։

ՎԱՐԴՈ

ՊԱՏՃԷՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԻԹԻՆԿԻՆ

—

Այսօր, 23 ապրիլ 1899 առաւօտեան ժամը 10ին, Վառնայի Հայոց եկեղեցւոյն բակին մէջ գումարուեցաւ ընդհանուր Հայկական միթինկ, այդ նպատակին համար կանխաւ կազմուած մասնախմբի մը հրաւէրին համաձայն։

Միթինկին նպատակն էր. «Ցառաջիկայ մայիսի 6/18 ին Լահէի մէջ գումարուելիք զէնքնկեցութեան Վեհաժողովին ուշադրութիւնը հրաւիրել հայկական խնդրի վրայ»։

Միթինկին գործերը կառավարելու և տալիք որոշումները գործադրելու համար առաջարկուեցաւ ընտրել մի դիւան (պիւրօ) և ժողովէն միաձայն հաւանութեամբ ընդունելով՝ ընտրուեցան հետեւեալները.

Տեարք

Ա. Ամիրխանեանց	Նախագահ
Տ. Աճէմեան	Քարտուղար
Յ. Բարսամեան	Անդամ
Կ. Սանտալճեան	»
Ս. Մարինեան	»

Դիւանը գրաւեց իրեն տեղը, և Պ. Նախագահը ժողովը բանալով նախ խօսեցաւ ինքը, բացատրեց թէ ի՞նչ նպատակի համար հաւաքուած է միթինկը և թէ ի՞նչ միջոցներով պէտք է պահանջել մինչեւ այսօր մեղի խոստացուած բարենորոգումներու գործադրութիւնը, երաշխաւորելու համար Թրքական Հայաստանի մէջ կեանքի, պատուի և ինչքի ապահովութիւնը։ Պ. Նախագահին խօսած առեն զինքը քանիցս ընդմիջել ուզեց ներկայ եղողներէն մէկը—Տ. Երուանդ Թաղլաճեան—որ սակայն դիւանին կողմէ հրաւիրուեցաւ յարգել օրինաւորութիւնը, և բացատրուեցաւ թէ եթէ ունի ոևէ ըսելիք կրնայ խօսք ուղել խօսելու համար։ Պ. Նախագահը վերջացուց իր խօսքը և խօսք տուաւ Տ. Երուանդ Թաղլաճեանին, որ սկսաւ խօսիլ միթինկին ոգւոյն և նպատակին հակառակ. յարձակեցաւ կուսակցութիւններու վրայ, բայց ժողովրդին մէջէն բաղմաթիւ բողոքի ձայներ բարձրանալով՝ դիւանը հրաւիրեց պարոն ատենագրին խօսիլ առանց նիւթէն շեղելու։ Նա շարունակելով վերջապէս եզրակացուց թէ ինք ալ կը համաձայնի միթինկին նպատակին։ Յետոյ Տ. Յ. Գուրպէթեան խօսք առնելով բացատրեց թէ միթինկը կազմակերպուած չէ կուսակցական հաշիւներ մաքրելու համար, և թէ Լահէի Վեհաժողովը ամենայարմար առիթ մըն է, որ ընդհանուր հայ ազգը անգամ մըն ալ բարձրացնէ իր ձայնը բողոքելու համար հայերուն քանի քանի անգամներ խոստացուած բարենորոգումներուն մինչեւ այսօր անգործադրելի մնացած ըլլալուն դէմ։

Դիւանը՝ միթինկին կողմէն Վեհաժողովին և պետութիւններուն ներկայացուելու համար որոշմանագրի մը բանաձեւը պատրաստելէն յետոյ, Տ. Նախագահը յայտնեց թէ այդ բանաձեւը ժողովին պիտի կարդայ Տ. Վահան Շահրիման և խնդրեց որ ժողովականները ուշադրութեամբ լսելով ընեն իրենց դիտողութիւնները՝ եթէ ունին։ Տ. Վ. Շահրիման բանաձեւը կարդալէ առաջ խօսեցաւ

Միթինկի նպատակին և անոր ձեռք առնելիք միջոցներուն կարեւորութեան վրայ. շեշտեց մանաւանդ թէ հայ ազգը թէեւ շատ տանջուեցաւ, մորթուեցաւ և արեան ճահիճներու մէջ լողաց, բայց երբէ՛ք չը յուսահատեցաւ և երբէ՛ք չպիտի յուսահատի օր մը անպատճառ իր ազատութիւնը ձեռք բերելէ։ Ցեռոյ կարդաց բանաձեւը և ժողովուրդը ձեռամբարձ քուէով միաձայն հաւանութեամբ ընդունեց հետեւեալ որոշումը. (*)

. . . . . .

Այս որոշմանագրէն զատ մ. Թինկը տուաւ նաեւ հետեւեալ որոշումները.

1. Իր դիւանին յանձնարարեց Միթինկին որոշմանագիրը ներկայացնել Զէնընկեցութեան Վեհաժողովի նախագահին՝ ճիշդ Վեհաժողովի բացման օրը՝ հեռագրով. իսկ պատճէնները այժմ անմիջապէս նամակի ձեւով ուղարկել Էահէի Վեհաժողովին անդամակցող բոլոր մեծ և փոքր պետութեանց արտաքին գործոց նախարարութիւններուն, խնդրելով անոնց աջակցութիւնը։

2. Միթինկին որոշումները Վեհաժողովին առջեւ պաշտպանելու, և ի հարկին մասնակի դիմումներով խնդրին ուժ և մղում տալու մտքով ժողովրդական պատուիրակ ընտրուեցաւ Տիար Մինաս Չերազ։

3. Միթինկին որոշումները գործադրելու համար պէտք եղած ծախսերը հոգալու նպատակով, որոշուեցաւ ժողովի փակումէն անմիջապէս յետոյ պնակներ դնել, ուր ժողովականները ձգեն իրենց լումաները, և եթէ այդ կերպով հաւաքուածը բաւական չըլլայ, կատարել ժողովրդական հանգանակութիւն։

(*) Այս որոշմանագիրը արդէն հրատարակած ըլլալով Շարժումի նախորդ թիւին մէջ՝ զանց կընենք զայն։

Ս. Խ.

4. Միթինկին մասնակցող բազմութեան թիւը միաձայն հաւանութեամբ ընդունուեցաւ իբրեւ երեք հազար անձ։

ԾԱՆՕԹ. — Տիար Նախագահին վերջին խօսքովը արդէն ժողովը փակուած էր, երբ Տ. Յ. Դուրպէթեան կրկին բեմ ելլելով առաջարկեց Տիար Մինաս Չերազին ընկերակցելու համար իբրեւ պատուիրակ ընտրել նաեւ Իշխան Գուիտոն Լուսինեանը, սակայն Տ. Նախագահը անոր պատասխանելով՝ հարցուց ժողովականներուն կամքը, և առաջարկը մերժուեցաւ ահագին մեծամասնութեամբ։ Տ. Յ. Դուրպէթեան առաջարկեց նաեւ որ Միթինկի որոշմանագրին պատճէնները ղրկուին ոչ միայն վեց մեծ պետութեանց և Ամերիկայի Միացեալ Նահանգաց կառավարութիւններուն ինչպէս Միթինկը որոշած էր, այլ և բոլոր միւս պետութիւններուն։ Միթինկը միաձայնութեամբ ընդունեց այդ առաջարկը և արձանագրուեցաւ իբրեւ որոշում։

ՅԱՒԵԼՈՒԱԾ. — Միթինկի 3րդ որոշման համաձայն ժողովատեղւոյն երկու դռներուն առջեւ պնակներ դրուելով զոյացաւ 282 ֆրանքի գումար մը. իսկ կատարուելիք հանգանակութեան արդիւնքը, ինչպէս նաեւ մանրամասն հաշիւը, պիտի հրատարակուի յաջորդաբար։

Միթինկը ցրուեցաւ ժամը 12ին։

Ի դիմաց Միթինկի

Բարտուղար	Նախագահ
Տիգրան Անանեան	Աբր. Ամիրխանեանց

Անդամք (Յովսեփ Բարսամեան
(Կարապետ Սանտաշենեան
(Սիմոն Մարինեան

Վառնա, 23 Ապրիլ 1899

——)·(——

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Օտեսա, 21 Ապրիլ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵՐ ՄԱՍՆԱՒՈՐ ԹՂԹԱԿՑԷՆ

Մեր առաջին նամակում նկարագրած միջավայրի սնուցած, փայփայած ու հարազատ զաւակն է, և մեր յօդուածի շարժառիթը՝ Բենիկ վարդապետը։

Լաւ ճանաչեցէք այս երիտասարդ սեւագլխին, որովհետեւ սաւելի վատ է քան իրան սնուցանող միջավայրը. միջավայրից ստացած մոլութիւնների հետ ունի իր բնածին, անհատական ախտերը։ Եւ բացարձակօրէն կարելի է ասել որ այդ անհատական ստոր հակումներն են որ սրան աւելի հեռու են տանում, խրում բարոյական ցեխի մէջ, դարձնում մի հրէշ. մի ճիւաղ...

Ապացուցանելու համար թւենք մեր հերոսի գործերը։

Սրանից մի քանի տարի առաջ մի մեծ թեմի ուսումնարանների՝ տեսուչն էր և, այդ պաշտօնում միշտ ոտքի տակ էր տալիս ժողովրդից ընտրված հոգաբարձուների իրաւունքները, խեղդում նրանց ձայնը, առաջ քշում իր կամքը և կրքերը։ Ուսուցիչների և աւագ ուսուցիչների հետ վարվում էր իր հին վերարկուների պէս, այս ու այն կողմ նետում և ամեն տեղ կռիւ, խռովութիւն գցում։ Գնացէք Ալեքսանդրապոլ, Երեւան, Վաղարշապատ, Իգդիր, Կաղզուան, Ղարս, Նախիջեւան. ամեն տեղ Բենիկի հետ կապված է մի խռովութիւն, ժողովրդի իրաւունքների բռնաբարութեան մի պատմութիւն...

Գնանենք նրա կեանքը իբր աշակերտ Գէորգեան ճեմարանի. հարցնենք նրա ընկերներին. բոլոր ընկերները կը պատասխանեն. մենք նրան անւանում էինք դժոխք, լրտես, տարտարոս։ Եւ այնքան զզվում էինք, որ մեր խմբական լուսանկարի միջից կտրեցինք և հանեցինք դրա գլուխը, երբ Ստեփան սարկաւագ էր կոչվում, չուզելով մեր պատիւը յաւիտեան արատաւորել։

Վերցնենք Օտեսայի կեանքը. ամբողջ երիտասարդութիւնը դրժգոհ է, փախչում ու խորշում է իբր մի ժանտախտից, որովհետեւ նրա մէջ տեսնում է բարեկամի, հարազատի ու ընկերոջ պատիւը գողացողին. դեռ թողնենք 15-17 տարեկան «պատանիներին» գրած սիրահարական նամակները, որոնց մանրամասնութիւնները կարող են պժգանք պատճառել ընթերցողին։

Բենիկը այս բոլոր զզվելի յատկութիւնները թագցնում է տարտիւֆական դիմակի տակ. շոյելով միւս միտներին. խուսկ ծխելով հարուստ ազատների առջեւ։ Խօսում է զղջացած ճառեր կրօնի, հաւատքի և ընկերային կեանքի սրբութիւնների մասին. և ինչ նիւթի մասին էլ որ հեռը վիճես, կը խօսի, բայց նեղն ընկած միջոցին իր զէնքը ունի. «դու Քրիստոսին չես հաւատում, քեզ հետ ի՛նչ խօսեմ»։

Եթէ այս մարդը բողոքում է գողութեան դէմ, համոզված եղիր որ երեկ գողի հետ էր համբուրվել. իսկ այսօր, իր բողոքից յետոյ, գրկախառնվելու է աւազակի հետ։ Եթէ սկսի ճառել աղնութեան և հիւրասիրութեան մասին, իմացէք որ մի ժամ առաջ գողացել է իրան հիւրասիրող բարեկամի պատիւը, լակել նրա տան բարոյական համբաւը։

Մի խօսքով, նախկին Ստեփան սարկաւագը, ներկայ Բենիկ վարդապետը, չունի մարդկային այն տեսակ թուլութիւնները, որոնք կոչվում են աղնութիւն, բարեխղճութիւն, բարոյականութիւն, և այլն. թէեւ, միշտ խօսում է աղնութիւնից և բարիից։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎՐԷԺ

(ՄԻ ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

Բ.

Ծեռ քարերը ափերին տալով՝ սլանում է փրփրադէզ Մայր-Արաքսը Կաղզվանի մօտովն գրկած ցից-ցից ժայռերով։ Գետափով անցնելու միայն մի նեղ ճամբայ կայ, որ տանում է դէպի Բաւէն։ Նրա մի կողմը ժայռոտ բլուրներն են, միւս կողմը կատաղի գետը. միայն աջ կողմից բաժանուում են մի քանի շաւիղներ, որ տանում են դէպի Վարդիհէր, Աղշկերտ, Մատուռ բլուր եւայլն։

Երասխի աջ ափին, Կաղզվանից չորս ժամ հեռու՝ գտնուում է Մատուռ բլուրը։ Գեղեցիկ է նա ինչպէս մի նազելի կոյս, կանաչապատ կրծքով, ծառազարդ փէշերով։ Նրա գագաթին կայ մի խոշոր ծառ, որի ճուերի տակ հանգստանում են Թուրք ու Ռուս բռնակալութիւնից դուրս վիժած աւազակները։ Ծառի դիմաց, մի քանի քայլի վրայ գտնուում է մի սեղանաձեւ խոշոր քար եւ մի ջինջ աղբիւրակ։ Օդը մաքուր է, ջուրն առատ ու անուշ, բնութիւնը հրաշալի։

* * *

1890 թուականի ամառուայ մի գեղեցիկ գիշեր էր։ Լոյսն սկսում էր արդէն ծէգին տալ։ Ալաճան եւ Արագածը մութ ուրուագծերով խանգարում էին հիւսիս-արեւելեան հորիզոնը, իսկ Կաղզվանի ձորի միւս ափին երեւում էր Ղազուխ-Ղայայի ճիւաղի նման ցցած լերկ կատարը։

Այդ տարաժամին, երկու հետեւակներ դուրս պրծան Կաղզվանի սյդիներից եւ դիմեցին դէպի աղհանք, որ գտնուում է Երասխի ձորի բերանին։

Նախընթաց գիշերը գողերը մտել էին մի հարստի տուն եւ բաւական ոսկեղէններ տարել։ Քաղաքի շրջաններում թափառում էին ոստիկանները։

Երկու ճամբորդներն ուշի ուշով չորս կողմ էին նայում եւ խիստ շտապում վարկեան առաջ Երասխի ձորը մտնել։ Առանց ոստիկանների ուշքը գրաւելու, անցան նրանք աղհանքի առջեւով եւ շուտով ընկան գետափի նեղ շաւիղը։ Այստեղ, վտանգից ազատուած համարելով իրենց, մի քիչ ազատ շունչ քաշեցին։

— Շտապիր, Հասօ, մինչեւ մատուռ երկու ժամ մնաց. Մոսկովի զաբթիանները մերոնց նման չեն. եամա՛ն են...

Այս ասողը Սուլէյմանն էր, իսկ միւսը իր որդին՝ քաջ աւազակ Հասօն։ Նրանք անցել էին Ռուսաց սահմանը, գողութիւն արել եւ այժմ շտապում էին Մատուռ հասնել, քիչ հանգստանալ եւ ապա մտնել իրենց վաթանը՝ Խնուս։

Արագ քայլերով անցնում էին նրանք Երասխի ափով, առանց լսելու նրա կատաղի գոռում-գոչումը. մոսկովի ձեռքից ազատուելու ծանր հոգսը խիստ էր զբաղեցրել նրանց միտքը։

Մի ժամից նրանք հասան Մատուռ տանող թեք շաւղին։ Առանց խօսելու ծուեցին դէպի ձախ եւ նեղ ձորակի միջով դիմեցին դէպի սարը։ Այլ եւս շտապելու կարիք չկար. լոյսը բաւական բացել էր եւ իրենք արդէն մտել էին մացառների մէջ, աւազակների բունը։

Բլուրի լանջի ժայռերի միջից երկու սրատես աչքեր նշմարեցին նրանց գալուստը։ Բարձրից նայողն ըմբռնեց, որ Ներանք գալիս են դէպի մեծ ծառը։ Նա խորհրդաւոր կերպով սուլեց։ Երեւաց մի երկրորդը, որ զաղտագողի մօտեցաւ առաջինին։

— Ի՞նչ կայ, Կարօ, հարցրեց նորեկը։

— Խէր է. Մեսրոպ. տա՛ Ցոնօ աղային, որ երկու քուրա են գալիս դէպի ծառը։ Եթէ երեք հոգի դան ինձ մօտ, մենք նրանց կարող ենք կենդանի բռնել»։

Մեսրոպը ժայռերի ետեւից կուզէ կուզ գնաց վեր։ Մի քանի վարկեանից երեւաց Ցոնօն երկու ընկերներով։ Փորձուած որսորդի պէս նայեց նա դէպի աւազակները, նշան արեց ընկերներին եւ երեքն էլ զգոյշ կերպով եկան կարօի մօտ, որ ճանապարհի բերանում, ժայռի ետեւը

Բայց ե՞րբ էք տեսել որ մի սրիկայ, մի գող և մի վաշխառու հրապարակաւ խոստովանի իր աղտոտութիւնները։ Մանաւանդ երբ այդ սրիկան ղարգացած է, ունի գեղեցիկ բառերի որոշ պաշար, իր ներքին աղտերը ծածկող լայն փէշերով վերարկու. գլխին՝ կուսութեան, բարքի մաքրութեան իբր նշան մի վեղար։

Օ՜, այսպէսները շատ դիւրութեամբ կը խաբեն ժիամիա անմեղներին։

Այդ ցոյց է տալիս թէ՝ օտար կղերի պատմութիւնը, թէ մեր ներկայ հոգեւորականութեան աղտոտութիւնները ընդհանրապէս, իսկ Բենիկ վարդապետինը մասնաւորապէս։

Եաշ, 20 Ապրիլ

Վանի և Թրքական Հայաստանի զանազան մասերու մէջ սովը կը տիրէ։ Աղգային և օտար թերթերը սրտաճմլիկ տեղեկութիւններ կուտան իրենց էջերուն մէջ։ Ամէն կողմ հայ անհատներ հանգանակութիւններ կընեն և դրամ կը հաւաքեն իրենց եղբայրներուն համար։

Սակայն ցաւալի է ըսել թէ Ռումանահայերուն մէջ բնաւ շարժում չը տեսնուիր։ Նա չը տեսներ իր եղբօր ցաւագին վիճակը. չը լսեր նորա ողբաձայն աղաղակները։ Ռումանահայը երեսը դարձուցած աչքը գոցած, ականջները խփած, ինքզինքը իր շռայլութեանց տուած, քարացեր մնացեր է։ Ո՞ւր են Ռումանահայ պաշտօնական մարմինները. ինչո՞ւ հանգանակութիւններ չեն ըներ. ինչո՞ւ ընկերութիւններ չեն կազմեր սովելոց նպաստ հասցընելու համար։

Սմայլի անապատին մէջ ոմանք մը։ Պուքրէշի փոքրաթիւ հայ գաղթականութիւնը հանգանակութիւն մը կատարելով, սովածներուն համար կլորիկ գումար մը ղրկած է Պատրիարքարան։ Սակայն այս հանդանակութեան մասնակցած են, մէկ քանի յարգելի բացառութեամբ, միայն վերջին երկու երեք տարիներէ հետէ հոս հաստատուած հայերը։ Ինչո՞ւ տեղացի հայերն ալ չը մասնակցին այսպիսի օգտակար և հրապուրիչ ձեռնարկի մը։ (*)

Ա. Ե. Ն.

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

Մեր Ամերիկայի բոլոր բաժանորդներէն կը խնդրենք որ մեզ ամերիկեան թղթադրամ չը ղրկեն, որովհետեւ վնաս կընենք։ Բոլոր գումարները ղրկել «Մընի օրտրը»ով։

— Քաֆէ Վասպուրական, Շիշթօֆ։ — Ապրիլ 7էն սկսած «Շարժում» կը ղրկենք ձեզ։ Վեցամեան հինգ լէֆ արդէն ստացած ենք։

— Տ. Պետրոս Յարութիւն, Ռումանիա. — Մ. Հանրիօթէն նամակ մը ստացանք ձեր «Շարժում»ը Բէօսթէնճէ Տ. Սերոբէ Զամպաքճեանի ղրկելու, բայց նամակատուն էն եկաւ։ Ձեր հրահանգին կը սպասենք։

— Ռումանիոյ մեր բոլոր թղթակիցներէն և բաժանորդներէն կը խնդրենք որ 10 սանթիմոց քառթ բօսթալ ղրկեն մեզ, որպէսզի տուգանքի չենթարկուինք։ Անվճար նամակները բացարձակապէս կը մերժուին։

— Մեր ջերմ շնորհակալութիւնը յայտնելով մեր թղթակիցներուն իրենց գրութեանց համար, կը խնդրենք որ կարճ և ամփոփ գրեն, և արձանագրեն այն իրողութիւնները որոնք մեր հանրային կեանքի մէջ նշանակութիւն ունին։

(*) Արդէն, Տ. Պուլուքլուի հաշտզումով անոնք հայեր չեն, այլ Լուսաւորչական Ռումէններ։ Եթէ չենք սխալիր, սա այն Պուլուքլուն է որ կը հրճուի Ա. Զօպանեանի «Պատասխանատուութիւնները» տխրահոչակ յօդուածով։

Ծ. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Տ. Աղարեան կաթոլիկ Հայոց Պատրիարքը մեռաւ 71 տարեկան։ Մեր Կ. Պոլսի թղթակիցը ղրկած է մեզ անոր գործերուն մասին թղթակցութիւն մը, զոր պիտի հրատարակենք յառաջիկայ թիւով։

— Հռոմի ռուսական դեսպան Մ. Նէլիւոֆի թարգմանը, հայազգի Տ. Յովհաննէս Ֆրանկիւլեան, կեսարիոյ Սարմատախլու գիւղէն 1300 տարուան մագաղաթեայ հին ձեռագիր մը գտնելով, զայն անձամբ Ս. Բեդբրսպուրկ տարած է և ընծայած. տեղւոյն հնութեանց Ակադէմիային։

— Ստացանք Վ. Փափազեանի «Հայ Բոշաներ» անուն աղգագրական ուսումնասիրութիւնը, մեծադիր 99 էջերով. արտատպուած Ազգագրական հանդէսէն, Տփխիս 1899. գին 50 կոպէկ։ Դաւ. ստացանք Մ. Զ.ի մի բանաստեղծական գրքոյկը «Թոթովմունք» խորագրով, Վառնա տպուած և 32 էջերէ բաղկացած։ Գինը 25 սանթիմ։ Յառաջիկային մտադիր ենք այս երկու գիրքերու մասին խօսիլ մասնաւոր յօդուածով մը։

— «Լ'Առմենիա» կը հերքէ «Մշակ»ի այն լուրը թէ Իզմիրլեան պատուակալ տաներէց անուանուած է Անգլիոյ թագուհիին։ Նոյնպէս կը հերքէ թէ մէկ քանի պետութեանց կողմէ Իշխան Լուսինեան նպաստաւոր պատասխաններ ստացած լինի իր ծանօթ շրջաբերականին։ Իշխան Լուսինեան ցարդ ստացած չէ որ և է պատասխան։

— Ութ թուրք աւազակներ յարձակեցան Կովկասի Զիշմոնլու հայաբնակ գիւղին վրայ՝ զայն բնաջինջ ընելու նպատակով, իրենց մէկ հին պարտութեան վրէժը լուծելու համար։ Մանաւ և իր հինգ ընկերները քաջաբար կռուելով, սպաննեցին երկու աւազակները և փիրաւորեցին մին։ Մնացածները փախան։ Մօտակայ քաղաքի ռուս ոստիկանութիւնը փութացած է կռուին վայրը՝ քննութեան համար։

— Կիլիկիոյ հանգուցեալ Կաթողիկոսին հրամանով, մէկ քանի տարիներ առաջ որոշուած է եղեր որ Հալէպի աղգային կալուածները երբէք հայու վարձու չը տրուին, որպէս զի յետոյ մեծամեծ դժուարութիւններ չը ծագին դրամները գանձելու մասին, և կուսակցական պայքարներու տեղի չը տրուի։ Ահաւասիկ որոշում մը որու ջերմապէս պէտք է հետեւին Պուլկարիոյ բոլոր քաղաքներու թաղական խորհուրդները։

— Հալէպի մէջ հանգանակութիւն կատարուելով, Վանի Ս. Խաչի որբանոցին համար 60 ոսկի, իսկ Վանի սովածներուն համար 20 ոսկի հանգանակուեցան։

— Բաղէշի մէջ աղքատութիւնը վերջին աստիճանի հասած է։ Խիլանցիները Բաղէշ թափած՝ կը մուրան։ Մր. Քոլ, ամերիկացի միսիոնարը, նպաստ—սեմ և հաց—կը բաժնէ առանց պարտամուրհակի և պայմաններու։ Պատրիարքարանը 50 ոսկի ղրկեց։

— Կը գրուի թէ Պատրիարքարանի կողմէ պաշտօնական ներկայացուցիչ պիտի չը ղրկուի Աղարեան Պատրիարքի յուղարկաւորութեան հանդէսին։

— Տ. Ճանշեան ռուսահայը 3000 ռուպլի ալ ղրկած է Պատրիարքարան, վերջերորդ որբանոցը բանալու համար։

——).(——

կծկուած՝ գիրք էր բռնել մի ոլորտի դիմաց։

— Մօտենո՞ւմ են, հարցրեց Յոնոն։

— Այո՛, 15–20 բոպէից նրանք մեր ձեռքում կը լինեն, ասաց Կարոն։

— Դաղար, անցնինք ձորի միւս բերանը, իսկ Կարոն ու Գէլոն թող այս տեղ մնան։

Մի ակնթարթում երկու գիրքերն էլ բռնուած էին. Յոնոն ու Դաղարը ձորակի վերեւում ելքի մօտ, իսկ Կարոն ու Գէլոն վարը՝ մուտքի դիմացը։

Կէս ժամից երեւացին Սուլէյմանն ու Հասոն։ Նրանք խաղաղ սրտով մտան ձորակը, չորս կողմ նայեցին եւ, ոչ մի տեղից վտանգ չտեսնելով, առաջ անցան։ Հազիւ 50 քայլ արին, դուրս թռան դիմացի կողմից Յոնոն ու Դաղարը։

— «Տուրը՛ն», կանչեց Յոնոն, ուղղելով հրացանը նրանց վրայ։

— «Տաւրա՛նմային», գոչեցին Կարոն ու Գէլոն, դուրս թռչելով հաւի կողմից։

Հայր ու որդի չարեցան. զգացին, որ ծուղակն են ընկել եւ զուր է հրացանի դիմելը։

— Վար դրէք ձեր հրացաններդ ու մօտեցէք մեզ, որոտաց Յոնոի սպառնական ձայնը։

Հայր ու որդի լուռ հնազանդեցան. վար դրին հրացաններն ու փամփուշտի գօտիները եւ սկսեցին մօտենալ։ Կարոն ու Գէլոն իջան գիրքերից, վերցրին նրանց զէնքերը եւ գնացին հաւից։ Այսպէս չորս հրացանաւորներով շրջապատած՝ տարան աւազակներին դէպի վեր, մնացած իր ընկերների մօտ։

Արեւը բաւական բարձրացել էր։ Կանաչ գորգի վրայ թեք էին ընկած Յոնոի միւս զինուորները. հրացանները կողքերին եւ վայելում էին բնութեան հրաշալիքները։ Բոլորի զգեստներն էլ միատեսակ էին, բոլորն էլ զինուած ռուսական բերդաններով, փամփուշտներով գօտիները մէջքերին ու կուրծքերին։

Յոնոին նշմարեցին թէ չէ՝ իսկոյն ոտքի ելան ու զինուորական բարեւեցին։

— Մեսրոպ, պարանները բեր, ասաց Յոնոն։

Թռաւ Մեսրոպը, մտաւ ժայռերի ետեւը եւ իսկոյն թոկը ձեռքին վերադարձաւ։

— Կապեցէք, հրամայեց Յոնոն եւ սկսեց դիտել ծեր աւազակի կերպարանքը։

Յոնոն այլայլուեց, աչքերն արիւնով լցուեցան, շրթունքները դողդողացին։ Արցունքի երկու խոշոր կաթիլներ ակամայ դուրս ցայտեցան աչքերից... 12 ընկերները նշմարեցին եւ խոր լռութեամբ դիտում էին. նրանք հասկացան որ մի փոթորիկ է սկսել սիրած հրամանատարի սրտում։

Տղայքն արդէն կապել էին քրտերի ձեռքերը ետեւից։ Յոնոն մի քիչ հանդարտել էր։

— Տարէ՛ք ծառի մօտ, հրամայեց նա կարուկ ձայնով։

Երբ փոքրիկ խումբը ճամբայ էր ընկնում, Յոնոն կանչեց Մեսրոպին եւ պատուիրեց, որ բերէ անցեալ օրը քրտի վրանից խլանած բարակ շղթաները։ Մեսրոպը բերեց եւ հետեւեց նրանց։

Գնացքը հանդիսաւոր էր։ Առաջից քայլում էր Յոնոն մոայլ ու մտազբաղ։ Նրա աչքերը մատնում էին ներքին ալէկոծութեան ու կսկծի ծովը։ Նրա ետեւից գնում էին Կարոն եւ ուրիշ չորս ընկերներ. ապա կապուած աւազակները, իսկ վերջից միւս տղայքը։

Հասան ծառի տակ։ Յոնոն նստեց քարէ նստարանի վրայ, իսկ զինուորները, չրջապատած քրդերին, լուռ սպասում էին նրա հրամանին։

— Փայտ կա՞յ, հարցրեց Յոնոն Կարօին եւ երբ վերջինս դրական նշան տուեց, հրամայեց, որ երեք հոգի գնան չոր փայտ բերեն։ Տղայքը գնացին։

Մռայլ էր Յոնոի սիրտը։ Նա նմանում էր կատաղած ծովի, որ սպառնում է կործանել ափերը, պատռել երկիրը։ Լուռ նստած քարի վրայ, դիտում էր երկու աւազակներին. աւելի շուտ՝ միայն աչքերն էր սեւեռել նրանց վրայ. բայց էապէս չէր տեսնում նրանց։ Իր երեւակայութեան մէջ կենդանացած տեսարաններն էին երեւում նրա աչքին... իր Շուշանը, իր Թորոն...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ. — Պահպանողական նախարարութիւնը պառակտուած է։ Տէվընշիրի դուքսը մտադիր է քաշուիլ քաղաքական կեանքէ։ Մէկ քանի ուրիշ նախարարներ ալ կը փափաքին հրաժարիլ։ Կառավարութեան յետադիմական քայլերը մեծ գրգռութիւն յառաջ բերած են միութենականներուն և քիչ-շատ երիտասարդ պահպանողականներուն մէջ։ Մինչեւ իսկ կը կարծուի թէ Երեսփոխանական ժողովը լուծուի։

ՓԻԼԻՊՊԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. — Բանակցութիւնները կը շարունակուին խաղաղութեան համար. սակայն զինադադար կնքուած չէ։ Մանր կռիւներ տակաւին կըլլան։ Ամերիկացիք լայն ինքնավարութիւն մը պիտի տան Փիլիպեան կղզիներուն, և պիտի հսկեն կարգ կանոն հաստատուելուն։ Ամերիկայի պատուիրակները կառաջարկեն որ բոլոր տեղական գործերու մէջ Փիլիպինցիները անկախ ըլլան։ Բայց ասոնք աւելին կը պահանջեն։ Ցարդ, Ամերիկացիք ունեցած են 200 մեռեալ և 1100 վիրաւոր։ Փիլիպինցիներուն կորուստը շատ մեծ է։ Ամերիկացի գնդապետ մը և տասնեւութ զինուորներ դերի ինկած են ապստամբներուն ձեռք։ Ցարդ, Ամերիկա 300 միլիոն տոլար ծախսած է Սպանական և Փիլիպեան պատերազմներուն համար։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ. — Այս երկու պետութիւնները համաձայնած են Չինական երկաթուղիներու մասին, և պայմանագիր մը կնքած են Չինաստանի անկախութիւնը պահպանելու համար։ Անգլիացիք բաւական դոհ են, և յաջողութիւն մը կը համարին դայն իրենց քաղաքականութեան համար, սակայն Սէսիլ Ռոդսի և Մէլիք Ս. Դաւիթ-Բէկի լուրերու գործակցութիւնը Փարիզէն մեզ կը հաղորդէ թէ ընդհակառակը Ռուսիա ամենէն աւելի օգտուած է, և թէ Չինաստանի մէջ, հակառակ Անգլիացոց փսփսքին, ազդեցութեան շրջանակ գծուած չէ։ Ինչ ալ լինին երկու կողմի կարծիքները. այս համաձայնութեամբ պատերազմի մէկ կարեւոր պատճառը կը պակսի աշխարհի վրայէ։

— Անգլիական թերթերը կը հրատարակեն պարսիկ կառավարութեան մէկ հերքմագիրը թէ Ռուսիա իրաւունք ստացած ըլլար Պարսկային ծոցին մէջ նաւահանգիստ մը գրաւելու։

— «Թայմս»ի Փարիզեան թղթակիցը կը գրէ թէ Ֆրանսացիք վերջապէս հասկցան թէ Ռուսիա իր շահէն զատ ուրիշ բան չը ճանչեր։ Հակառակ Ռուսիոյ քաղաքական մեթոտներուն, Ֆրանսա միշտ երեւակայած է իր ազդեցութիւնը վերստին դտնել ատոր հետ զինակցելով։ Փարիզի ռուս դեսպանը ըսած էր թէ ցորչափ Անգլիա և Ռուսիա անհաշտ թշնամիներ մնան, Ֆրանսօ-Ռուսական զինակցութիւնը գոյութիւն պիտի ունենայ։ Արդ, հիմա ամէն ինչ փոխուեցաւ։ Երրեակ զինակցութիւնը քայքայուեցաւ, Տելքասէ յաջորդեց Հանօթոյին, Ֆրանսա չատեր Անգլիան և Իտալիան, իսկ Ռուսիա հաշտուեցաւ Անգլիայի հետ։ Բոլոր ասոնք լաւ նշաններ են Լահէի Զինաթափի Վեհաժողովին համար։

Խ ՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — Սան Մունի ծովախորշին խնդրին առթիւ, իտալական նախարարութիւնը իր հրաժարականը տուաւ։

— Մարսէյլի մէջ գործաւորները դադրեցան աշխատելէ, և յաւելում պահանջեցին օրականներու։ Գործադուլը հետզհետէ կընդարձակուի։ Պէլճիքայի մէջ գործադուլը կը շարունակուի և ամէն օր բանթող գործաւորներուն թիւը կաւելնայ։

— «Բօրէսփօնտանս Փոլիթիք» կըսէ թէ Բ. Դուռը շատ հոգ կընէ Ռուսական զօրքերու հաւաքման մասին Հայաստանի սահմաններուն վրայ։ Կը կարծուի թէ, եթէ Թուրքիա չը կրնայ վճարել պատերազմական տուգանքներուն մնացորդը, Ռուսական զօրքերը պիտի մտնեն Հայաստան։

— Թուրք զինուոր մը յարձակելով վիրաւորած է Իսկիւպի Աբրպ հիւպատոսը։ Սերպիա հաւուցում պահանջած է։

— Ամերիկացիք կատաղի կռիւ է մը յետոյ, դրաւեցին Սէն-Թոմաս քաղաքը։ Փիլիպինցիք յամառութեամբ պաշտպանելէ յետոյ զայն, կրակի տուին և լեռները քաշուեցան։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս կիրակի Վառնայի երեսփոխանական ընտրութիւնները կատարուեցան ամենայն կանոնաւորութեամբ։ Զորս թաղերու մէջ չորս մասնաւոր չէնքեր որոշուած էին, ուր մարդկային հոսանք մը դիմեց մինչեւ երեկոյեան ժամը 7ը։ Ոստիկանները աշխուժով կը հսկէին բարեկարգութեան որ երբէք չը խանգարեցաւ ոչ մի տեղ։ Ընտրութիւնը բացարձակապէս ազատ էր և օրինաւոր։ Ազատակն երեք ընտրելիներն ալ ընտրուեցան։ Քուէ

Տր. Բատօսլավօֆ ստացաւ 3749
Մ. Բանքօֆ „ 3751
Ահմէտ էֆէնտի „ 3403

Իսկ Ռամկավարականաց ընտրելին, համակրելի փաստաբան Մ. Միրսքի, ստացաւ 3203 քուէ։

— Տակաւին ճիշդ տեղեկութիւններ չը կան ընտրութեանց վերջնական արդիւնքին մասին, սակայն ցարդ հասած լուրերէն կը տեղեկանանք թէ միացեալ ազատականները մեծ յաղթանակ մը տարած են։ Կրսուի թէ 169 անթոռներէն 120ը դրաւուած են ազատականներէ։ Պահպանողական կուսակցութիւնը գրեթէ բոլորովին փճացած է։ Ընկերվարականները մէկ քանի ձայն աւելի պիտի ունենան խորհրդարանին մէջ։ Առաջին անգամ է որ, պուլկար ազգը ազատ քուէով կընտրէ իր երեսփոխանները, և կը տեսնենք թէ նա չերմապէս յարած է ազատական սկզբունքներու և գաղափարներու։

ԿՈՒԶԼՈՒ ՀԱՅՐՍՏԱՆԱԼ

—

Դիմեցէ՛ք
Մ. Թիւթիւնճեան եւ ընկ.
ի Ռուսճուք

Ուր ըստ առաջնոյն կը վճռուին, Սոֆիա քաղաքի՝ Պուլկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի տոմսակները։

Օտար երկիրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին։

Ա. Զ. Դ.

—

Յակոբ (Զատօ) Նազարեան, 30 տարեկան, եւ Յարութիւն Միրզոյեան, 21 տարեկան, Ողմրցիները 96ի ամրան Մարսէյլէն վերադարձած են Ռուսատան։ Կը խնդրուի փեղկութիւն ունեցողներէն հաղորդել հետեւեալ հասցէին՝

Apraham Kalousdian
233 Walnut st.
Chelsea Mass.
(U. S. America)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатнипа „Взаимность“ Варна.

Խմբի գտնուած տեղը մի արձակ փոս էր, որ չորս կողմից շրջապատուած էր ժայռերով։ Երկու նեղ կիրճեր ճանապարհ էին տալիս անցորդին մի կողմից մտնելու, միւսով դուրս գալու։ Մի ջինջ աղբերակ բղխում էր ծառից մի քիչ հեռու։ Լռութիւնը կատարեալ էր. բոլորն զգում էին, որ քրդերի սարսափ Յոնօի սիրտն ալէկոծ է։ Աղբերակն էր, որ անդադրում քչքչում, գլորում էր իր վճիտ կոհակները դէպի Մայր-Սրաքսը։

Փայտը բերին։ Յոնօն վճռական քայլերով վեր կացաւ իր տեղից եւ հրամայեց.

— Կապեցէք տղային շղթայով այս քարից եւ շարեցէք փայտերը նրա չորս կողմը։

Երբ տղայքն շտապով կատարեցին նրա հրամանը, պատուիրեց, որ չոր տերեւներ լցնեն փայտերի վրայ։

Այդ էլ կատարուեցաւ։ Խարոյկը պատրաստ էր եւ զոհը մէջը։

— Կապեցէք այս հրէշին էլ ծառի կոճղից՝ այնպէս որ աչքը բանալիս միշտ որդուն տեսնի։

Այդ էլ վերջացաւ։

— Կրա՛կ տուէք։

Եւ խարոյկը բռնկեցաւ։ Բոցերն սկսեցին բարձրանալ ու լափել աւազակի մազերը, դէմքը եւ մարմինը։ Զոհն անտանելի ճիչեր էր արձակում, գալարուում... Յոնօ փայտ էր նետում կրակի մէջ եւ գազանաբար ծառից կապուածին նայում...

Սկզբում վրդովուեց աւազակ հայրը. մղկտաց. ճիչեր արձակեց, ցնցուեցաւ, բայց զուր։ Մի քանի վարկեաններից յետոյ նա անասնական սառնասրտութեամբ սկսեց դիտել իր որդու այրելը... Արցունք չկար այլեւս. չորացել էին աչքերը, գոյնը թռել, արձանացել։ Միայն յաճախ բաց ու խուփ լինող աչքերն էին վկայում, որ դեռ կենդանի է։ Փակում էր աչքերը, որ չտեսնի, բայց չէր կարողանում համբերել. նորից փակում, նորից բանում էր...

Ծուխը քուլայ-քուլայ վեր էր բարձրանում. ճենճի հոտը աշխարհ էր բռնել։

* * *

Խարոյկը հանգել էր. Հասօն այրուած էր։ Նրա մարմնից մնացել էր միայն մի անձեւ, ածխացած գունդ։ Հայրը դեռ կապուած էր ծառից։

— Բացէ՛ք դրա կուրծքը, մոնչեց Յոնօն։

Տղայքը մերկացրին քրտի կուրծքը։ Յոնօն մօտեցաւ նրան։

— Սուլէյման, ճանաչեցի՞ր ինձ, հարցրեց նա սեղմուած ու կատաղութեամբ լի ձայնով։

Բուրդը լռեց եւ, կարծես մի բան յիշելու զօր անող հայացքով, սկսեց նայել Յոնօի երեսին։ Վերջինս սեւեռել էր իր արիւնալի աչքերը քրդի վրայ։ Այդ հայացքը պատռում էր աւազակի կուրծքը։

Յանկարծ քուրտը ցնցուեց, քթի տակից մի բան մրմռաց ու աչքերը փակեց, չուզելով այլեւս տեսնել Յոնօի երեսը։ Պարզ էր. նա ճանաչեց Յոնօին։ Աւազակի մտքով անցան Ա. գիւղի երկու տարի առաջուան դէպքերը։

Այս ամենը տեղի ունեցաւ խիստ արագ, մի քանի երկվարկեանում։ Խմբի համար պարզուեց, որ իրենց պետը մի հին վրէժ է լուծում։

Բաշեց Յոնօն իր սուր դաշոյնը, մխեց աւազակի սիրտը։ Ուժեղ հոսանքով ժայթքեց կարմիր արիւնը։ Բռնեց նա երկու լայն ձեռքերը հոսանքի առաջ, լիքը լցրեց, տարաւ բերանին ու սկսեց խմել մի անպատմելի զարհուրանքով։

Մեր քուրդը խորը չնչեց մի քանի անգամ, չոեց իր վերջին հայացքը զաւակի այրուած մնացորդների վրայ, լեզուն դուրս ու ներս արեց, խոխռաց ու գլուխը կախեց՝ զարկուած թռչունի նման։

Յոնօի 12 առաքեալները չրջապատել էին նրան ու ապշած դիտում էին։ Երկու տարի էր նրանք այդ մարդու հետ էին. չա՞տ քրդերի արեւը մարել էին, շատերին կտոր-կտոր արել, բայց ա՞յդքան վրդովուած, այդքան գաղանացած երբէ՛ք չէին տեսել նրան։

— Տարէ՛ք այդ հրէշի դիակը, գլորեցէք ժայռերից վար. թող գազանները լափեն նրան։ Այսպէս պէտք է լուծէ իր վրէժը ամէն մի հայ։

ՎԵՐՋ

ԳԱՍՊԱՐ

——).(——